



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 1522-Ա/Բ

« 18 » ապրիլ 2010թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ N 4 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ 3-ՐԴ ԱՍՏԻՃԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹՎԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010թ. ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 826-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 9-ի «ՀՀ կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 808-Ն որոշմամբ հաստատված «Միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգի» 8-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչության եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ճամբարակ քաղաքի N 4 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան կրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, համակազմի սահմանային տեղերի 21 թիվը փոխարինել

63-ով և այդ կապակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. հուլիսի 7-ի N 826-Ս/Ք հրամանում <<21>> թիվը փոխարինել <<63>>-ով:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչության պետ Մ.Մովսիսյանին:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Ավետիսյանին:



Ա.Ավետիսյան

Ա.ԱՇՈՏՅԱՆ